

2473

ԳՐԱԴԱՐԱՆ. Պ. ՔԱՂԱՔԻ ԳՐԱԴԱՐԱՆ

196

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

ՅԵՎ.

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ



631.5
P - 14

ԳՐԱԴԱՐԱՆ

1934

ԵՐԵՎԱՆ

04 AUG 2010

Ա/35

631.5
Բ-14


ՊՐՈՖ. Գ. ՔԱՂԱԿԱՆԻՔՅԱՆ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

ՅԵՎ.

ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

~~1904/3~~



~~ՀՀ 153~~

29 AUG 2011

17027

ԲԵՐՔԱՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՅԵՎՀՈՂԻ
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Սոցիալիստական գյուղատնտեսության ընադավառում առաջիկայի մեր ամենահիմնական խնդիրը հանդիսանում է հողերի բերքատվության վճռական բարձրացումը, վորով կավելանա կոլլեկտիվ և խորհրդային տնտեսությունների արտադրանքը, կմեծանա դրանց յեկամուտը և արագությամբ կրականանա մեր կուսակցության մեծ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ կոլտնտեսականներին ունեվոր դարձնելու մասին առաջադրած լոգունգը, մի լոգունգ, վորի իրականացման ուղին արդեն բռնել ենք, սակայն պետք ե լարենք մեր բոլոր ուժերն այդ խնդիրն ել ավելի արագ և վճռականորեն իրականացնելու համար:

Հողի բերքատվության բարձրացումը կախված է հետեւյալ գլխավոր և հիմնական պայմաններից՝ հողի մշակությունից, պարարտացումից, տեսակավոր և զտված սերմեր ցանելուց, մոլախոտերի և բույսերի վնասատուների ու հիվանդությունների գեմ մղվող պայքարից և մեր այժմյան պայմաններում ամենակարենոր միջոցառում հանդիսացող ցանքսաշրջանառության կիրառումից։ Պետք ե լավ իմանալ՝ այս բոլոր միջոցառումների միաժամանակ կիրառումն ե, վոր հնարավոր ե դարձնում բերքի վճռական բարձրացումը, իսկ յեթե այդ միջոցառումներից մեկն ու մեկը չենք կատարում ժամանակին և կանոնավոր կերպով ապա բերքի բարձրացման չափն ել համապատասխան ձևով պակաս ե լինում։

Հազվագյուտ չեն այն դեպքերը, յերբ մենք այս կամ այն միջոցառումը կիրառում ենք, իսկ մյուսները վոչ, վո-

Ֆեխն. խեցագիր՝ Գ. Սարյան
Սըրտագրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնվել և արտադրության 1934 թ. գետը. 3-ին.
Ստորագրվել և ապագրելու 1934 թ. գետը. 17-ին.
Գլավիտ Խ 66 Տիրած 2000 Պատմկ Խաչիկ Գրիգորի
25.000 ռալ. նշ.

ԵԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՋՐԱՏԻ ՏՊԱԿԱՆ, ՆԱԼՐԱԴՅԱՆ ՅԵՎՀ



38204.12

ըի համար և սպասած եֆեկտը չենք ստանում, ինչպես, որինակ՝ 1932 թ. բամբակացան շրջաններում կատարած պարարտացումը համարյա վոչ մի եֆեկտ չտվեց, չորհիվ այն հանգամանքի, վոր մեր, աշխատանքի վատ կազմակերպվածության և դասակարգային թշնամու վոտնձգություններին ուժեղ հարված չտալու հետևանքով, բերքի բարձրացման մյուս միջոցառումները լրիվ կերպով չկիրառվեցին: Այդ գործում դասակարգային թշնամու ագիտացիան կարող է խոշոր դեր խաղալ, յեթե իր ժամանակին չհայտաբերենք այդ և արժանի հականարված չտանք: Հատկապես հողի մշակության ասպարիզում վերջերս յերես վան յեկած վնասարար տեսությունների կիրառումը կարող եր բերքի անկում առաջացնել, վորի եյությունը մերկացվեց մեր կուսակցության կողմից և չեղոքացվեց, սակայն բերքի բարձրացման միայն այդ բնադրափառը չե, ուրասելի յե թշնամու հարվածը, այլ և մյուս բնադրափառներում, ուստի, բերքի բարձրացման ագրումիջոցառումների կատարման ընթացքում անհրաժեշտ ե բոլշեիկան զգոնությամբ հականարված հասցնել ինչպես աջ և «ձախ» ողորշյունիստների, նույնպես և կուլակային ու այլ հականեղափական տարրերի ամեն տեսակի վոտնձգությունների դեմ:

Խորհրդ, Հայաստանի պայմաններում այս բոլորին ավելանում ե հաեւ այլ հիմնական ինդիք, վորի դերը նույնպես շատ մեծ ե բերքի քանակին ավելացնելու համար, դա ջրի ինդիքն ե, վորը մեր վոռոգվող դաշտավայրերում սահմանափակում ե մշակելի տարածությունների քանակը, իսկ անջրդի վայրերում, մանավանդ մեր նախալեռնային շրջաններում առաջին հերթին վորոշում ե բերքի քանակը: Մինչեւ վոռոգվող դաշտավայրերում ջրի պակասությունը մեզ հանրավորություն չի տալիս մշակել մեր ամբողջ մշակության համար պիտանի հողերը, այլ մենք մը նրանց միջնականական կամաց համարավոր կարգավորություն չենք համար պահպանական դաշտավայր միջոցով մասը միայն, շակում ենք Արաբատյան դաշտի մասը:

անջրդի՝ նախալեռնային և մասամբ ել լեռնային շրջաններում, (ինչպես Կոտայք, Աշտարակ, Թալին, Մարտունի, Բասարգեչար և այլն), բերքի քանակը վորոշում ե այն ջուրը, վորը գանգում ե հողերի մեջ: Վորքան այս շրջանների հողերում ջուր շատ լինի, այնքան ել դրանց բերքն ավելի մեծ կլինի, և վորքան ջուրը քիչ այնքան ել ցածր բերք: Յեզ վորովին այս շրջաններում անձրևները քիչ են գալիս, կիման չորային ե, հողը չորացնող քամիներն անպակաս, ուստի այստեղ փոքր ի շատեւ կանոնավոր բերք ստանալու համար, պետք ե հողի մշակությունն այնպես կատարել, վոր հողի մեջ վորքան կարելի յե շատ ջուր պահպի, անձրևների և ձմռան ձյան ջուրը չգոլորշիանա հողից, այլ մնա հողի մեջ և ողագործվի մեր ցանած բույսերի կողմից: Արան կարելի յե համնել միմիայն հողի կանոնավոր և նպատակահարմար մշակության միջոցով:

Բույսերի աճելու, մնվելու և զարգանալու համար անհրաժեշտ ե ջուր, մնունդ և ող: Այս բոլորը հողերի մեջ կան, բայց թե ինչ չափով են գտնվում դրանք հողի մեջ, այսինքն՝ հողը բույսերին վորքան հնարավորություն ե տալիս կանոնավոր կերպով զարգանալու, մնվելու և բերք տալու, դա ևս իր հերթին կախված ե հողի մշակությունից:

Յերբ մենք ամառը բերքը հավաքելուց հետո դիտենք հողերը, մանավանդ հնձից մի քանի որ անց՝ կտեսնենք թե հողը վորքան և պնդացել և չորացել: Այսպես պինդ և չոր հողերի մեջ վոչ միայն բույսերի արմատները զարգանալ չեն կարող, այլ նույնիսկ շատ անգամ հնարավոր չի լինում վարել այդ հողերը:

Պարզ ե, վոր այդպիսի պնդացած և չորացած հողի մեջ վոչ բավական քանակությամբ ող կա և վոչ ել մանավանդ ջուր, վորովին այդպիսի հողերի մասնիկները միմյանց վրա իսկա կերպով դարսված են լինում, իսկ նրանց միջի ծակոտիները շատ նեղ՝ այնպես վոր այստեղ ողի և ջրի համար շատ քիչ տեղ կա: Յեզ վորովին այստեղ ուղարկում ենք Արաբատյան դաշտի մի փոքր մասը միայն,

Փոքրիկ, նեղ ծակոտիների միջոցով (մազական անոթներ) ջուրն ինքնիրեն հեշտությամբ վեր և բարձրանում, ուստի հեշտությամբ ել գոլորշիանում ե: Վորքան հողի յերեսը չորանում ե, այնտեղից ջուրը հեռանում ե, այնքան ել այդ նեղ ծակոտիներով հողի ներքին շերտերից ավելի շատ ջուր և բարձրանում նրա յերեսը և այնտեղից գոլորշիանում: Այսպիսով պինդ հողի միջից. ջուրն անընդհատ գոլորշիանում ե, հեռանում մինչև նրա վերջին կաթիլը և աշնանը, ցանքի ժամանակ, վոչ միայն հողի յերեսն ե չոր լինում, այլ և նրա ներքին շերտերը:

Հողի մշակության գլխավոր նպատակն ե ուրեմն փխրեցնել պնդացած հողերը, նրա ներքին աննդանյութերով հարուստ շերտը բարձրացնել հողի յերեսը և հողի միջի ծակոտիներն ավելացնել, այդ ժամանակ փխրեցած հողի խոշոր ծակոտիները կլցվեն ողով, իսկ նեղ ծակոտիները՝ ջրով: Այսպիսի հողերի միջից ջրի գոլորշիացումն ել դանդաղ կրնթանա, հողն իր մեջ ավելի շատ ջուր կպահի և այլևս այնպես չի պնդանա: Հետագայում նրա մշակությունն ել ավելի կհեշտանա և բույսերի արմատներն ել հեշտությամբ կմտնեն հողի մեջ, լավ կզարդանան ու այդպիսով ավելի լրիվ կողտագործեն հողի մննդանյութերը: Միաժամանակ բույսերն այստեղ կդանեն անհրաժեշտ քանակությամբ ող և ջուր, առանց վորոնց նրանք չեն կարող կանոնավոր զարգանալ:

Բացի դրանից, հողի մշակությունը նպատակ ունինակ վոչնչացնել նախկին բերքի մնացորդները և մոլախոտերը, և այդ բոլորը, նաև հողը մտցրվելիք պարարտանյութերը (գոմաղը, կանաչ և արհեստական պարարտանյութերը) հավասարապես տարածել հողի մեջ, վորպեսզի մինչև հետեւյալ բույսերի ցանեն այդ նյութերը քայլայվեն և նրանց միջի մննդանյութերը բույսերի համար մատչելի դառնան:

Հողի մշակության այս նպատակներից ել բղասում է նրա ժամանակն ու ձեվերը:

Հողի մշակությունը պետք ե սկսել բերքը հավաքելուց հենց անմիջապես հետո: Սա ունի յերկու հիմնական նշանակություն: Առաջնը, մոլախոտերի վոչնչացումն ե, յերեկորդը՝ ջրի խնայողությունը:

Բոլորին ել հայտնի յե, փոր մոլախոտերի մի մասը հաննում ե հացահատիկներից առաջ կամ նըսնց հետ միաժամանակ. սրանց հասած սերմերը կամ թափվում են հողի մեջ և հետեւյալ տարին բանում ու վարակում դաշտերը և այդպիսով նրանց բերքը պակասեցնում, կամ հացահատիկները կալսելու ժամանակ են թափվում և կեղտոտություն: Բայց մոլախոտերի մի մասը արտերում, կուլառուշական բույսերի ստվերի տակ արագ չի աճում, այլ մնում ե նվազ: Արտերը հնձելուց հետո այս մոլախոտերն ստվերից ազատվում են և հնարավորություն են ստանում արագորեն աճելու, ծաղկելու և սերմեր տալու մանավմնդ մեր նախալեռնային և հատկապես լեռնային շրջաններում, հացահատիկները հավաքելուց հետո խոզանա արագությամբ կանաչում ե այդ մոլախոտերի զարգացման հետևանքով: Ահա այս մոլախոտերը վոչնչացնելու համար ե, փոր ալտերը հնձելուց հետո անմիջապես պետք ե հողը վարել, վոլպեսզի մոլախոտերը վոչնչանան և հնարավորություն չունենան ծաղկելու և սերմեր տալու: Բացի դրանից, վերը տեսանք, փոր ստվերից ազատվող հողի յերեսն արագությամբ չորանում ե և հողի մեջ գտնվող ջրի վերջին կաթիները արագությամբ գոլորշիանում են ու կօրչում:

Այդ ժամանակ հողը վարելով մենք վոչ միայն աճող մոլախոտերն ենք վոչնչացնում, այլ նաև փխրեցնելով հողի յերեսի չերտը՝ կովում ենք ջրի արագ գոլորշիացման դեմ: Բացի այդ, մենք հնարավորություն ենք ստեղծում հողի մեջ գտնվող մոլախոտերի սերմերի ծլման համար, վորոնց հետագայում հեշտությամբ վոչնչացնում ենք:

Բայց վորովհետեւ հնձի ժամանակ աշխատող ձեռքերը սաստիկ զբաղված են լինում բերքահավաքի աշխա-

տանքով, ուստի վարելու համար վոչ իրենք են ագատ լինու՞մ
և վոչ ելքաշող ուժը (տրակտորներ և լծկաններ), այս դեպ-
քում հողը խոր վարելու հնարավորություն չկա, դրա կա-
րիքն ել չկա, ուստի անհրաժեշտ ե հողը վարել շատ սաղը,
միմիայն հողի յերեսը սեփացնելու համար։ Այս ժամանակ
բավկան ե հողը վարել մինչև 8 սանտիմետր։ Սրա հս-
մար գործ են ածում չորս խոփանի գութաններ, իսկ
տրակտորով աշխատելու գեղքում՝ ավելի շատ խոփեր
ունեցող գութաններ։ Ծանր կավային հողերի յերեսը սեփա-
նելու համար բավկան ե նաև սկավառակավոր փոցխով
խոզանը փոցխելը. այս գործիքը տվյալ դեղքում կարող ե
միանգամայն փոխարինել սաղը վարող բազմախոփ գութան-
ներին։

Այստեղ մեզ կարող են առարկել թե այդ աշխա-
տանքը նույնպես անկարելի յէ կատարել աշխատող ձեռ-
քերի և քաշող ուժի այլ աշխատանքներով ծանրաբռնված
մնելու հետևանքով. այդ ճիշտ է, ինարկե, միմիայն անհա-
տական մանր տնտեսությունների նկատմամբ, իսկ կոլեկ-
տիվ և խոր հրդային տնտեսությունները կարող
են և պարտավոր են աշխատանքն այնպես դա-
սավորել, վոր հնարավորություն ունենան այդ
անհրաժեշտ աշխատանքը կատարելու։ Այս դեպ-
քում նրանք ավելի շատ հնարավորություններ ունեն, վո-
րոնցից ամենաեյականը նրանց տրամադրություն տակ յե-
ղած տրակտորներն են, հանձինս խորհնանետությունների
տրակտորների և կոլեկտիվներն ընդգրկող մեքենատրակ-
տորային կայանների արակտորների։

Առաջին հերթին ուրեմն կոլեկտիվ տնտեսությունները
պետք ե աշխատանքն այնպես կազմակերպեն, վոր ապա-
հովեն խոզանավարը ժամանակին կատարելը, վորովետե
հետագա տարվա բերքը խոշոր չափով կախված ե այդ
աշխատանքի ժամանակին կատարելուց։ Պետք ե ամեն

նարավորություն գործադրել՝ խոզանները հնձելուց անմի-
ջապես սեացնել, վորովինետե ամեն որ մեծ քանակությամբ
ջուր ե կորչում, հողերը պնդանում են և վորքան ուշ
կատարենք այդ աշխատանքը, այնքան նա ավելի գժվար
կլինի։

Բացի մոլախոտերի վոչչացումը, ուրիշ ի՞նչ նշանա-
կություն ունի բերքը հավաքելուց հետո անմիջապես
հողի յերեսը սեացնելը։

Հողի յերեսը սեացնելով մենք նրա վերին շերտը
փիսրեցնում ենք և դրանով ուժեղ կերպով պակասեցնում
ջրի գոլորշիացումը։ Ջրի գոլորշիացումը դադարեցնելու
հետևանքով հողում շատ ջուր ե մնում և յերեսանց սե-
վացրած հողը չի պնդանում, մնում ե փափուկ և աշ-
նանը նրա վարելը շատ ե հեշտանում։ Բացի այդ, յերեսը
սեփացրած հողում բույսերի արմատները, խոզանը և մոլա-
խոտերը հեշտությամբ քայլայվում են, նրանց միջի մնըն-
դատու նյութերը քայլայվում և հետագա ցանվող բույ-
սերի համար մատչելի յեն դառնում։ Այս պրոցեսների ժամա-
նակ և նրանց ու այլ ուժերի ոգնությամբ քայլայվում
են նաև հողի այլ (միներալական) մասերը և նրանց մեջ
գտնվող բույսերի համար անմատչելի մննդանյութերը
նույնպես քայլայվում և լուծելի յեն դառնում։ Այս բոլորը
շատ կարևոր հանգամանք ե հետագա ցանվող բույսերը
մննդանյութերով պալահովելու տեսակետից։

Այսուհետեւ բերքի հավաքելու և նրա հետ կապված
աշխատանքները թեթևացնելուց հետո, յեթե նույն հողերն
աշնանը պետք ե ցանվեն, դաշտային շրջանում գարնանա-
ցանից, իսկ լեռնային շրջաններում խոտաբույսերից ա-
զատվելուց հետո, անհրաժեշտ ե հողերը խոր վարել. վոր-
պեսզի հողը մինչև ցանքսը ժամանակ ունենա «հասունա-
նալու», այսինքն՝ նրա հատիկները միմյանց հետ միանան
— հնձիկներ կազմեն, բերքի մնացորդները (արմատներ,
խոզան, մոլախոտեր և այլն) քայլայվեն և հողը հարստա-

նա լուծվող մննդատու նյութերով։ Այս վարն անելուց հետո պետք է հողի յերեսը հավասարեցնել՝ փոցխելով նըրան զիգզագ փոցխով և աշնանը ցանել։ Յեթե վերջին փոցխից հետո անձրեներ գան և հողի յերեսը պնդանա, այդ դեպքում ցանելուց առաջ պետք է նորից փոցխել, կեղեր ջարդել, վորպեսդի շարքացան մեքենան անխափան կարողանա աշխատել։

Իսկ յեթե հողերը հատկացվելու յեն գարնանացանի համար, ապա պետք է սևացած խողանը վարել ուշ աշնան, մնացած դաշտային աշխատանքները վերջացնելուց հետո։ Առհասարակ պետք է զյուղատնտեսական աշխատանքներն այնպես դասավորել, վոր ամեն անդամ գարնանացանքին հատկացվելիք բոլոր հողերը վարվեն աշնանից, մանավանդ այն հողերը, վորտեղ պետք է բամբակ, ճակնդեղ և կարտոֆիլ ցանվեն։

Խչու պետք է գարնանացանին հատկացված հողերը վարել աշնանից, ինչ նշանակություն ունի աշնան վարը։

Աշնան վարն ունի մի քանի նշանակություն։

ա) Աշնանը վարած հողը յերկար ժամանակ մնալով փուխր դրության մեջ և առանց բույսերի, թե աշնան տաք յեղանակներին և թե գարնանը ձյունը հալչելուց հետո, յերկար ժամանակ ունի հասունանալու՝ հնձկային կազմություն ձեռք բերելու, վորի հետևանքով թե նրա ջուր պահելու ընդունակությունն և մեծանում և թե իր մեջ շատ ող և պարունակում, վորովհետեւ փուխր հողերում հասունացումն առաջացնող թե ֆիզիկո-քիմիական և թե միկրոբուզգիական պրոցեսներն ավելի հաջողությամբ են կատարվում, մանավանդ աշնան տաք յեղանակներին։

բ) Վարելու ժամանակ առաջացող կոշտերը ձմբան դրտի ազդեցության տակ քայլացնում, փշրվում են և գարնանը շատ շուտով սկսում են ծել մոլախոտերի սերմերը և ցանքից առաջ կատարվող մշակության ժամանակ նրանք ջատվում և վոչնչանում են։

Են հողի յերեսին, հետևապես հողի յերեսը հարթ է լինում և կոշտերից ազատ։

գ) Ցրտի ազդեցություն տակ հողի հասունանալը նույնպես արագանում է, արագանում և նրա հնձկային կազմություն ձեռք բերելը, իսկ հողի մննդատու նյութերը նույն ցրտի ազդեցության տակ լուծվում և բույսերի համար մատչելի յեն դառնում։ Հետևապես աշնանը վարած հողի մեջ գարնանացանները ծլելուց հետո անմիջապես ապահովված են լինում սննդանյութերով և արագությամբ աճում են։

Աշնանավարի չորրորդ և կարևորագույն նշանակությունն ել այն է, վոր աշնանից փիրեցրած հողերն իրենց մեջ մեծ քանակությամբ ջուր են կուտակում։ Մինչդեռ աշնանից չերկված հողերի վրա յեկած անձրեների և ձյան հալվելուց առաջացող ջրերը, մանավանդ թեք տեղերում, հոսում են հողի յերեսից և հեռանում, իսկ հարթ տեղերում, չոր հողերի՝ ջուր ծծելու փոքր ընդունակության շրջորնիվ, հողի յերեսին լճանում և ապա գարնան արեկի ազդեցության տակ արագորեն գոլորշիանում են, աշնանից հերկված հողերն, ընդհակառակն, ամբողջ ջուրը ծծում են և պահում իրենց մեջ։

Բացի դրանից, հերկած հողերը մեծ քանակությամբ ձյուն են հավաքում իրենց վրա, հատկապես ակոսների խորդուբորդությունների մեջ, վորոնք առաջանում են վարելու ժամանակը, ուստի աշնան հերկը վոչ մի գեպը ու շպետք և փոցխել, այլ վարելուց հետո թողնել առանց վորեն մշակության մինչև գարուն։

Աշնան հերկը նույնպես նպաստում է մոլախոտերի վոչնչացման, վորովհետեւ աշնանը հերկված հողերի մեջ գարնանը շատ շուտով սկսում են ծել մոլախոտերի սերմերը և ցանքից առաջ կատարվող մշակության ժամանակ նրանք ջատվում և վոչնչանում են։

Յեկ վերջապես աշնան հերկը շատ մեծ նշանակության ունի աշխատանքի կազմակերպման տեսակետից: Աշնան կատարած հերկն ոժանդակում և գարնան աշխատանքներին, վորովինետև գարնան՝ աշխատանքի մի մասն արդին աշնանից կատարված ե լինում, ուստի գարնան մյուս աշխատանքները կարելի յե սկսել ավելի շուտ և ավելի մեծ հաջողությամբ կատարել, վորովինետև հողի մշակության ամենադժվար աշխատանքը՝ վորն արգեն կատարված և աշնանից, ուստի և ամբողջ աշխատավոր ձեռքերն ու քաշող ուժը կարելի յե գործադրել ցանքսի աշխատանքների վրա, վորով և հարավորություն և ստեղծվում այդ կարևոր աշխատանքները ժամանակին կատարել:

Ուրեմն՝ գարնանացաններին հատկացված հողերից բարձր բերք ստանալու համար պետք ե ամառը բերքը հավաքելուց հետո հողի յերեսը չորս կամ ավելի խոփանի գութաններով սևացնել և ապա աշնանը վարել 18—20 սանտիմետր խորությամբ, հատկապես խոր պետք և վարել բամբակին, ճակնդեղին, կարտոֆիլին հատկացված հողերը և այլպես թողնել մինչև գարուն:

Այսուեղ յերկու խոսքով կանգ առնենք վարի անհրաժեշտ խորության վրա, վորովինետև այդ մասին շատ և դրվել վերջերս Խորհրդային Միության պարբերական մամուլի մեջ և այս խնդրում յերևան են յեկել մի շարք վընասակար տեսություններ, ըստ վորի հողի վարի խորությունն իբր թե վոչ մի նշանակություն չունի բերքի համար, ուստի այդ տեսության կողմանակիցներն առաջարկում են հողերը վարել սաղր՝ 10—12 սանտիմետրից վոչ խոր: Այսուեղ պետք և ասել, վոր դա միանգամայն սիսալ և ու մնասակար, վորովինետև ինչպես դիտողություններն ու մանրամասն ուսումնասիրությունները ցույց են տվել, բույսերի արմատները շատ խոր են զնում և ոգտագործում են այսուեղ գտնվող ջուրը և մասամբ ել մնընդանյութերը: Վորքան հողի ներքին շերտերը փուխր լի-

նեն, այնքան ել բույսի արմատներն ավելի մեծ հեշտությամբ կզնան գեպի ներքեւ և ավելի հաջողությամբ նրանց կապահովեն անհրաժեշտ ջրով և մննդանյութերով: Ուստի կուլտուրական բույսերի զարգացմանը նպաստելու համար պետք և վարել 18 սանտիմետրից վոչ պակաս խորությամբ, յեթե ի հարկե հողի վարելաշերտի կազմությունն այդ թույլ և տալիս:

Բանն այն ե, վոր կան մի շարք հողեր, վորոնց վարելաշերտը խոր չե և այդ շերտից հետո գալիս են ավաղ կամ այլ չհողմանարված ապաներ, վորոնք հողի յերեսը հանելով և լավ հողը գրանց տակը թողնելով, բույսերի զարգացման համար վոչ նպաստավոր պայմաններ ենք առաջացնում և դրա հետևանքով շատ անգամ բերքի անկում ենք ունենում: Այդպիսի հողերն ի հարկե միանգամից խոր վարելն անթույլատրելի յե, սակայն դա դեռ չի նշանակում, վոր այդ հողերը միշտ ել պետք և սաղր վարել: Նման հողերի վարելաշերտի խորացումը նույնպես հրամայողական պահանջ ե բերքի բարձրացման տեսակետից, ուստի մենք պետք և այդ հողերը վարելիս աստիճանաբար խորացնենք վարը, տարեկան 1—2 սանտիմետր և արդեն մի քանի տարուց հետո մենք կունենանք այնպիսի խորությամբ վարելաշերտ, վորը հնարավորություն կտա մեզ ոգտագործել հողի ներքին շերտերում գտնվող ջուրը և մննդանյութերը:

Նման հողերի քանակը չայաստանում շատ չնշին ե, մեր հողերի մեծ մասն ավելի խոր վարելաշերտ ունի, ուստի վորպես կանոն մեր հողերը պետք և վարել վորքան կարելի յե խոր, համենայն դեպք հացահատիկների համար 18 սանտիմետրից վոչ պակաս, իսկ բամբակի և արմատապալարապատղների համար՝ մինչև 24 սանտիմետր:

Խոր վարն առանձնապես կարևոր և Խորհրդ: Հայաստանի համար մանավանդ այն պատճառով, վոր մեր հողերը վերին աստիճանի վարակված են մոլախոտերով, վորոնք հակայական չափերով պակասեցնում են մեր հողերի բերքատվությունը, իսկ այդպիսի հողերի բերքատվությունը,

նը բարձրացնելու ամենահիմնական պայմաններից մեկը հանդիսանում է մոլախոտերի փոխչափումը: Յեզ վորով-հետեւ մոլախոտերի գեմ գործադրվող միջոցառումներից առաջնակարգ նշանակություն ունի խոր վարը, ուստի մենք ամեն միջոց պետք ե գործադրենք վարը խոր կատարելու համար:

Աշխանը վերը նկարագրած ձևով վարած հողերը, գարունը բացվելուն պես, հենց վոր հողերն այնքան չորանան, վոր հարավոր լինի արդեն աշխատել, անմիջապես պետք ե թեթև փոցխով փոցխել, խորդուբորդությունները հարթել, վորպեսզի ջրի գոլորշիացումը փոքրանա և մոլախոտերն ել փոչնչանան և ապա նոր ցանել: Իսկ յեթե ձմռան ընթացքում հողերը շատ պնդացած են լինում, վորը հաճախ տեղի յեւ ունենում ծանը կավային հողերում, այդ դեպքում անհրաժեշտ ե կրկնավար անել, վորից հետո պետք ե անմիջապես յերեսը հարթել թեթև փոցխերի միջոցով:

Շատ անգամ հողերում ջուր կուտակելու, մոլախոտերը փոչնչացնելու և հողի բերքատվությունը վերականգնելու համար անհրաժեշտ ե լինում վորոշ ժամանակ հողը մշակելուց հետո մի տարով նրան հանդիսաւ տալ և ցել անել, վորը, ինչպես հայտնի յեւ, լայն չափերով կիրառվում և մեր նախալեռնային և լեռնային շրջաններում: Սակայն այստեղ մեր ցել անելու պրակտիկան լրիվ չի համապատասխանում ցելի նպատակներին: Սովորաբար մեզ մոտ ցելն անում են շատ ուշ, հունիսի վերջերին և հուլիսին, յերբ մոլախոտերն ուժեղ կերպով զարգանում և մեծ մասամբ արդեն սերմեր տված են լինում, վորի հետեւ փառուի հողից թե մեծ քանակությամբ ջուր և գոլորշիացած լինում և թե հողերն ել ավելի շատ են վարակում մոլախոտերի սերմերով: Այս տեղերը, ուր ցելն ուշ ե արվում և ցելի տեղը հնձվում ե խոտի համար, ապա պետք ե այդ խոտը, հատկապես պոչուկով վարակած շրջաններում, (ինչպես Սեվանի լճի շրջակայքի շրջաններում և մասամբ ել Ղարաքիլսայի, Լենինականի և

Համամլույի շրջանները) պետք ե հնձել պոչուկի ծաղկման շրջանում, համենայն դեպս չպետք ե թողնել, վոր պոչուկը հասունանա և սերմեր տա: Պոչուկի գեմ պայքարը պետք ե տանել ամեն ուղղությամբ, վորով-հետեւ դա հանդիսանում է մեր լեռնային շրջանի, հատկապես Սեվանի լճի ավազանի շրջանների, ամենատարածված և վասակար մոլախոտը, վորն ուժեղ կերպով պակասեցնում է մեր հողերի բերքատվությունը: Յեթե սրան ավելացնենք նայել այն, վոր վարչած ցելում աճող մոլախոտերի գեմ վոչ մի պայքար չի տարվում և աշխանը ցանքից առաջ անասունները լցնում են ցելերի մեջ ու արածեցնում, վորով հողերն անասունների վոտքերի տակ ել ավելի յեն պնդանում և ավելի մեծ չափերով ջուր գոլորշիացնում, ապա հասկանալի կլինի թե ինչու մեզ մոտ կիրառվող ցելը հարավորություն չի տալիս լրիվ կերպով ոգտագործելու այն բոլոր առավելությունները բերքի բարձրացման համար, ինչ վոր նապետք ե տար:

Յելի նպատակին համելու, ջուր կուտակելու և մոլախոտերի գեմ պայքարելու համար անհրաժեշտ և ցելերը վարել գարնանացանը վերջացնելուց անմիջապես հետո, այսինքն՝ մայիսին և յեթե հետագայում ցելերը կանաչում են, պետք ե անպայման փոցխել, մոլախոտերը փոչնչացնել և հողի յերեսը փիրեցնել, վորպեսզի ջրի կուտակում տեղի ունենա, իսկ անասուններին ցելի մեջ արածեցնելը պետք ե անպայման արգելել, վորովինետեւ, ինչպես վերն ասացինք, այդպիսով մենք ցելի բոլոր դրական կողմերը միանգամայն փոչնչացնում ենք և փոխանակ բերքն ավելացնելու, բերքի պակասեցման պատճառ դառնում:

Ուրեմն՝ ցելերը պետք ե կատարել վաղ գարնանից և ամառվա ընթացքում մի քանի անգամ մշակության յենթարկել նրանց, հողի յերեսը փուլսը պահելու և մոլախոտերի գեմ հաջող պայքարելու համար:




4135



17027

ԳԻՐ 26 Կ.



Проф. И. КАЛАНТАРЯН

Обработка почвы и поднятие урожая